



**ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ**

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103, ք.Ապարան,
Բաղրամյան 26
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
Info_aparan@aarhus.am

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐ - Ն ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

Ապարանի Օրհուս կենտրոնի
համակարգող՝ Նատալյա Մանուկյանից

23.04.2015թ.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

Ինչպես հայտնի է Ձեզ, անցած՝ 2014թ. աշնանը Արագածոտնի մարզի Արագած համայնքի տարածաշրջանում արձանագրվել էր <<Կարտոֆիլի քաղցկեղ>> հիվանդության բռնկում: Թե՛ կարտոֆիլի մշակությանը զբաղվող և թե՛ կարտոֆիլ սպառող բնակիչները անհանգստացած են այս խնդրի առնչությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

- Ո՞րն է այդ հիվանդության առաջացման պատճառը և ի՞նչ տարածք են զբաղեցնում վարակված հողամասերը
- Իրականացվել են արդյոք ախտորոշիչ հակահամաճարակային միջոցառումներ՝ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել համաճարակի բուն օջախների տեղայնացման ու վնասազերծման, Քաղցկեղի հետագա տարածումը կանխելու և սննդի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Նատալյա Մանուկյան